



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N ՀԴ/ԴԵԸ

«30» 06 2021թ.

Ձեռ

<<Իմպորտ Թրեյդ>> ՍՊԸ (ՀՎՀՀ 05023335)

Ք.Երևան, Շրջանային 2/2

էլ. հասցե՝ importart.info@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«ՀՀ ոստիկանության» և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10 մարտի 2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3 ծածկագրով մեղալների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10,03,2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

“Իմպորտ Թրեյդ” ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Պայմանագրի 6.2 կետով հաշվարկվել է տույժ, որի ընդհանուր գումարը կազմում է 11 554 /տասնմեկ հազար հինգ հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ: Վերոնշյալ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքները ուղարկվել են փորձաքննության՝ ապրանքների տեխնիկական հատկանիշները ստուգելու նպատակով: ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է փորձաքննություն, որի համար պետական բյուջեից վճարվել է 35 280 /երեսունհինգ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ: Պայմանավորված վերոգրյալով և հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1.2 կետի ա) պարբերությունը՝ հայտնում են, որ պետք է հատուցվի մեդալների անպատշաճ որակի լինելու պատճառով ՀՀ ոստիկանության կողմից կատարված ծախսերը՝ այն է վերը նշված 35280 ՀՀ դրամը, որը պետք է վճարվի պետությանը պատճառված վնասների փոխհատուցումներից մուտքեր հետևյալ հաշվեհամարին՝ 900005028155 և վճարման անդորրագիրը եռօրյա ժամկետում պետք է ներկայացվի ՀՀ ոստիկանություն: Նշված ժամկետում չվճարելու և չներկայացնելու դեպքում տվյալ գումարի գանձումը կիրականացվի դատական կարգով:

Պայմանագրի 6.3 կետով՝ հաշվարկվել է տուգանք, որը կազմում է 23 191 (քսաներեք հազար հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը՝ որակավորման ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Էվոկաբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 4 638 084 /չորս միլիոն վոց հարյուր երեսունութ հազար ութսունչորս/ ՀՀ դրամ, և տուժանքի համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 463 809

/չորս հարյուր վաթսուերեք հազար ութ հարյուր ինը/ ՀՀ դրամ ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու
նպատակով:

ոստիկանության գնդապետ

Գ. Մուսաբեկյան **Վ.Մովսիսյան**

Կարգադրող՝ Բ.Փահլևանյան
Հն. 50-39